

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՈՒՐՔՄԵՆՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ, ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Թուրքմենստանի կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

տնտեսական և առևտրական հարաբերություններում տեխնիկական խոչընդոտների վերացման, արտադրանքի համատեղելիության, փոխադարձ փոխարինելիության, մարդու կյանքի և առողջության համար դրա անվտանգության ապահովման, շրջակա միջավայրի պաշտպանության նպատակով,

ցուցաբերելով ստանդարտացման, չափագիտության և հավաստագրման բնագավառում համագործակցություն զարգացնելու ձգտում, ընդ որում ելնելով միջազգային կազմակերպությունների կողմից ընդունված սկզբունքներից և նորմերից,

ղեկավարվելով երկու Կողմերի տնտեսական շահերով, Անկախ պետությունների համագործակցության կառավարությունների ղեկավարների կողմից 1992 թվականի մարտի 13-ին ստորագրված «Ստանդարտացման, չափագիտության և հավաստագրման բնագավառում համաձայնեցված քաղաքականություն վարելու մասին» Համաձայնագրի դրույթներով,

երկու պետություններում գործող օրենսդրության շրջանակներում,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերը փոխադարձաբար ճանաչում են ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման և հավաստագրման գործող պետական համակարգերը:

Կողմերը՝

միմյանց անվճար տրամադրում են տեղեկություններ և նորմատիվ փաստաթղթեր (ստանդարտների և տեխնիկական պայմանների տեղեկատուներ, տեղեկագրեր, հանդեսներ, ստանդարտներ և ստանդարտացման, չափագիտության և հավաստագրման վերաբերյալ նորմատիվ և տեղեկատու փաստաթղթեր) երկու օրինակից՝ ըստ ԱՊՀ շրջանակներում գործող՝ ստանդարտացման, չափագիտության և հավաստագրման միջպետական խորհրդի որոշումների, բազմացնելու, պատճենահանելու և լրացուցիչ համաձայնեցված պայմանով Կողմերի տարածքում իրացնելու իրավունքով,

միմյանց միջև համաձայնեցված կարգով փոխադարձաբար ճանաչվում են ստուգաչափման, ստուգաճշտման միջոցների պետական չափագիտական վկայագրման արդյունքները և այն կազմակերպությունները, որոնք կատարում են ստուգաչափման և փորձարկման լաբորատորիաների և կենտրոնների հավատարմագրում, ինչպես նաև նրանց կողմից հավատարմագրված լաբորատորիաները և կենտրոնները, որոնք իրականացնում են չափման միջոցների ստուգաչափում, փորձարկումներ և ստուգաճշտում,

ճանաչում են մյուս Կողմի հավաստագրման մարմինները, հավատարմագրված փորձարկող լաբորատորիաները և կենտրոնները, փոխադարձաբար մատակարարվող արտադրանքի համապատասխանության հավաստագրերը և նշանները պայմանով: Արտադրանքի անվտանգության համար պատասխանատու է այն պատրաստողը, իսկ համապատասխանության հավաստագրերի հավաստիության համար՝ հավաստագիր տվող մարմինը:

Նորմատիվ փաստաթղթերի պարտադիր պահանջներին չհամապատասխանող սերտիֆիկացված արտադրանքի մատակարարման փաստեր հայտնաբերելու դեպքում ներմուծող Կողմի սերտիֆիկացման ազգային մարմինը կասեցնում է այդ արտադրանքը մատակարարող Կողմի սերտիֆիկատների ճանաչումը և այդ մասին անմիջապես տեղեկացնում է նրա հավաստագրման ազգային մարմին: Նրանց գործողությունը վերսկսվում է Կողմերի փոխադարձ պայմանավորվածությամբ:

Կողմերից յուրաքանչյուրը կարող է կիրառել մյուս Կողմի ստանդարտացման, չափագիտության և հավաստագրման վերաբերյալ նորմատիվ փաստաթղթերը, եթե դրանց պահանջները չեն հակասում սահմանված կարգին, որը մտցվել է ստանդարտացման, չափագիտության և հավաստագրման ազգային մարմնի կողմից՝ պետության գործող օրենսդրությանը համապատասխան:

Չորված 2

Կողմերը միմյանց միջև համագործակցությունը կիրականացնեն համաձայնագրերի, արձանագրությունների և ծրագրերի հիման վրա, որոնք նախատեսում են՝

համագործակցություն ստանդարտացման, չափագիտության և հավաստագրման վերաբերյալ նորմատիվ և մեթոդական փաստաթղթերի մշակման ընթացքում,

կադրերի պատրաստում և որակավորման բարձրացում,

ֆիզիկական մեծությունների միավորների ազգային չափանմուշների և ելակետային նմուշային չափման միջոցների ստեղծում, կատարելագործում և համեմատում,

սյուբի և սյուբերի բաղադրությունների և հատկությունների, ստանդարտ նմուշների, ինչպես նաև սյուբի և սյուբերի ֆիզիկական հաստատունների և հատկությունների մասին ստանդարտ տեղեկության ստեղծում և օգտագործում,

ստանդարտացման և հավաստագրման պետական համակարգերի հետագա զարգացում,
կատարելագործում և ներդաշնակեցում,

ստանդարտացման, չափագիտության և հավաստագրման բնագավառում
տեղեկատվական գործունեության զարգացում:

Յրոկ 3

Կողմերը կաջակցեն միմյանց ստանդարտացման, չափագիտության և հավաստագրման
բնագավառում այն միջազգային կազմակերպություններին անդամագրվելուն, որոնց անդամ է
Կողմերից մեկը, և այդ կազմակերպություններում աշխատանքներ կատարելու հարցերում:

Յրոկ 4

Կողմերն ապահովում են ստացվող փաստաթղթերի և սույն Համաձայնագրի
չոջանակներում կատարվող աշխատանքների և գիտատեխնիկական նվաճումների
արդյունքների մասին տեղեկության գաղտնիությունը, եթե փոխանցող Կողմը նշում է դրանց
գաղտնիության մասին:

Յրոկ 5

Կողմերից յուրաքանչյուրը կարող է ազատորեն օգտագործել համագործակցության
ընթացքում ստացած գիտատեխնիկական տեղեկությունը, եթե մյուս Կողմը չի նշել դրա
գաղտնիության մասին: Այդ տեղեկությունը երրորդ պետության կարող է փոխանցվել միայն
այն տրամադրող Կողմի համաձայնությամբ:

Յրոկ 6

Սույն Համաձայնագրով նախատեսված աշխատանքների համակարգումը և իրագործումը
հանձնարարվում է՝

Հայաստանի Հանրապետությունում՝ Հայաստանի Հանրապետության ստանդարտացման,
չափագիտության և հավաստագրման վարչությանը,

Թուրքմենստանում՝ գլխավոր պետական տեսչությանը:

Յրոկ 7

Սույն Համաձայնագրի դրույթները անհրաժեշտության դեպքում կոնկրետացվում են
Հայաստանի Հանրապետության ստանդարտացման, չափագիտության և հավաստագրման

վարչության և Թուրքմենստանի գլխավոր պետական տեսչության միջև՝ լրացուցիչ համաձայնագրերով և արձանագրություններով:

Յոթերորդ 8

Սույն Համաձայնագիրը չի շոշափում այն իրավունքները և պարտականությունները, որոնք բխում են այլ պետությունների հետ Կողմերի և նրանց կազմակերպությունների կնքած պայմանագրերից:

Յոթերորդ 9

Սույն Համաձայնագրի մեկնաբանման և կատարման հետ կապված բոլոր վիճելի հարցերը կլուծվեն փոխադարձ խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով՝ տարբեր մակարդակներով:

Յոթերորդ 10

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարելի է կատարել փոփոխություններ և լրացումներ:

Յոթերորդ 11

Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամանակով և ուժի մեջ է մտնում այն ուժի մեջ մտնելու համար Կողմերի օրենսդրությամբ նախատեսված բոլոր ներպետական ընթացակարգերի կատարման մասին Կողմերի վերջին գրավոր ծանուցումն ստանալու օրվանից:

Կողմերից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը՝ մյուս Կողմին գրավոր տեղեկացնելով իր մտադրության մասին: Համաձայնագրի գործողությունը դադարում է մյուս Կողմի կողմից այդ ծանուցումը ստացվելուց 6 ամիս հետո:

Կատարված է Աշխաբադ քաղաքում 1997 թվականի մայիսի 5-ին, երկու քնտրիկներով, յուրաքանչյուրը՝ հայերեն, թուրքմեներեն և ռուսերեն, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են:

Սույն Համաձայնագիրը տարբեր կերպով մեկնաբանելու դեպքում նախապատվությունը տրվում է ռուսերեն տեքստին:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1998 թվականի սեպտեմբերի 29-ից: